



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԿՈՆՏԼԻԿՏՆԵՐ

Առարկան՝ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Հետազոտող ուսուցիչ՝ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԼՄԻՐԱ

Ուսումնական հաստատություն՝ ՋՐԱՇԵՆԻ Ս. ՔՈԼՈՉՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ	5
ԳԼՈՒԽ 2. ԿՈՆՏԼԻԿՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ՎՐԱ	10
ԳԼՈՒԽ 3. ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ԵՎ ԿՈՆՏԼԻԿՏԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ.....	15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	19
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքն, ունենալով երեխայի վրա ազդելու նշանակալի ներուժ, կարող է դառնալ նրա անձի ձևավորմանը նպաստող կամ հակառակը՝ խոչընդոտող գործոն: Երեխաները ծնողներից և մտերիմ հարազատներից ստանում են նախնական տեղեկատվություն հասարակության մեջ գործող նորմերի, գոյություն ունեցող դրական ու բացասական երևույթների մասին: Հետևաբար նրանց անհատականության ձևավորման գործում գերակշռող դերը պատկանում է հենց ընտանիքին:

Թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է երեխայի անհատականության արտահայտման կարևորությամբ: Ընտանեկան խնդիրները, որոնք խաթարում են տվյալ պրոցեսի սահուն ընթացքը, պետք է մտահոգիչ լինեն յուրաքանչյուրի համար, որովհետև ընտանեկան կենսագործունեությունն է ապահովում սերնդի զարգացումը: Եվ քանի որ կոնֆլիկտներից խուսափելն անհնար է, հարկավոր է տեղեկացված լինել ու ծանոթ դրանց դրսևորման առանձնահատկություններին: Դա հատկապես անհրաժեշտ է երեխայի հետ աշխատող ուսուցչին, որպեսզի նրա, երեխայի ու ծնողի հաղորդակցումը ստացվի արդյունավետ:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ընտանիքի դաստիարակության մեթոդների և մոտեցումների ուսումնասիրության հիման վրա ցույց տալ՝ ինչպիսի ազդեցության է ենթարկվում երեխան:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Թեմայի հետազոտությունը կատարվել է դիտարկման, համեմատության, վերլուծության մեթոդների կիրառմամբ:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք են՝ գլուխ 1՝ Ընտանիքի դերը և գործառույթները, գլուխ 2՝ Կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի վրա, գլուխ 3՝ Մանկավարժի

հաղորդակցումը երեխայի հետ և կոնֆլիկտի բացահայտումը, եզրակացությունից, առաջարկություններից և գրականության ցանկից:

Առաջին գլխում ներկայացրել ենք, թե ինչ դեր ունի ընտանիքը երեխայի համար ու թե ինչ գործառույթներ է իրականացնում: Երկրորդ գլխում նկարագրել ենք՝ ինչպիսի կոնֆլիկտներ կարող են ծագել ընտանիքում, և ինչպիսի ազդեցություն դրանք կարող են գործել երեխայի հոգեկան, ֆիզիկական առողջության, առօրյա գործունեության, ուսման վրա: Երրորդ գլխում համառոտ խոսել ենք այն մասին, թե ինչպիսի դեր կարող է ստանձնել մանկավարժը, ինչ եղանակներով է պետք հաղորդակցվել երեխայի հետ, որը ունի որոշակի կոնֆլիկտներ ծնողների հետ կամ գտնվում է ընտանեկան կոնֆլիկտների ազդեցության ներքո:

Եզրակացության մեջ ամփոփվել են թեմայի ուսումնասիրության արդյունքները:

Աշխատանքն ունի առաջարկությունների մաս, որտեղ ներկայացված են տվյալ աշխատանքի հեղինակի առաջարկները:

ԳԼՈՒԽ 1

ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ընտանիքը, չնայած սոցիալական փոքր խումբ լինելուն, փոխհարաբերությունների բարդ և յուրօրինակ համակարգ է, որը միավորում է կնոջը, տղամարդուն ու երեխաներին, երբեմն նաև այլ մոտ հարազատներին: Ընտանիքն այն կետն է, որտեղից սկսվում է ամենը՝ անձի դաստիարակություն, բարոյական սկզբունքների և արժեքների ստեղծում, անհատի մեջ բարության ու էմպաթիայի սերմանում: Դրա շնորհիվ ձևավորվում են երեխայի պատկերացումներն արդարության ու անարդարության, հավասարության և անհավասարության, ընկալումները պատասխանատվության ու նվիրվածության մասին¹: Ընտանեկան միջավայրը երեխայի համար փորձ ձեռք բերելու առաջին վայրն է, որին հաջորդում են այնպիսի օղակներ, ինչպիսիք են բակը, մանկապարտեզը, դպրոցը: Ի վերջո, ընտանեկան միջավայրը, որտեղ ծնվել և մեծանում է մանուկը, նրա դաստիարակության ու սոցիալականացման աղբյուրն է:

Ստացվում է, որ դաստիարակումն ընտանիքի կողմից իրականացվող առաջնային գործառույթներից մեկն է: Դաստիարակչական գործառույթը մեկ ուղղությամբ ընթացող և սահմանափակ ժամանակահատվածում իրագործվող պրոցեսն է: Այդտեղ դաստիարակող ու դաստիարակվող կողմերը փոխադարձաբար ազդում են միմյանց վրա, համագործակցում: Նախևառաջ, փոքրիկը ստանում է ինֆորմացիա պահելաձևի, ընդունված կարգի, կանոնների, «կարելի»-ների և «չի կարելի»-ների վերաբերյալ²: Երկրորդ փուլում լինում է համոզմունքների ձևավորումը: Բարոյական նորմերը ձեռք են բերվում ոչ միայն այն ժամանակ, երբ երեխային բացատրում են՝ որն է լավը, որը՝ վատը: Վարքագծի նորմերի ու կանոնների մասին ձեռք բերված գիտելիքները պետք է վերաճեն

¹ Տես՝ Оксана Германовна, Основы психологии семьи и семейного консультирования, Москва, 2005
<https://soc-education.ru/wp-content/uploads/2017/07/Prohorova-SemKonsSphera.pdf> /հղվել է 24.08.22 /

² Տես՝ Семья и ребенок - зеркальное отражение друг друга,
<http://ddu462.minsk.edu.by/ru/main.aspx?guid=1801> /հղվել է 24.08.22 /

համոզմունքների: Մանկության տարիներին ճիշտ ձևավորված համոզմունքները հիմք են դառնում հասարակության հետագա գոյության համար: Առանց այդ հաստատուն դրույթների դաստիարակության գործընթացը կունենա թույլ և երեքուն բնույթ: Ծնողների անձնական օրինակն է դրանց արմատավորման գլխավոր միջոցը: Չէ՞ որ երեխան կրկնօրինակում է մեծահասակներին, ընդօրինակում նրանց: Երրորդ փուլում արդեն երեխան սովորում է ինֆորմացիան ընկալել զգացմունքների, ժեստերի միջոցով, լինել էմպաթիկ՝ կարեկից: Կոնկրետ էմպաթիկ լինելն անգնահատելի ունակություն է և հնարավորություն է տալիս հասկանալ մյուսներին, կիսել նրանց խոհերն ու հոգսերը, պայքարել հանուն բերկրանքի և երջանկության³: Երեխան նույնացնում է իրեն ուրիշ մարդու հետ, վերագրում է իրեն նրա գործողությունները, փոխանցում համապատասխան վերապրումները:

Ի դեպ, ծնողական դաստիարակում ասվածը ենթարկվում է դասակարգման⁴: Մասնագետներն առանձնացնում են դրա երեք հիմնական տիպ՝ ժողովրդավար, լիբերալ և ավտորիտար: Ժողովրդավարական սկզբունքով առաջնորդվող մարդիկ հասկանում են երեխաներին, հաճախ գովաբանում են, և, որպես կանոն, սխալների համար չեն պատժում, բացատրում են՝ ինչու դա չպետք է արվի: Նրանք հանգիստ են արձագանքում փոքրիկի քմահաճույքներին, հրաժարվում են դրանց ենթարկվելուց: Արդյունքում երեխաները մեծանում են նախաձեռնող, հետաքրքրասեր, շփվող և հարգող: Լիբերալ-ազատականի դեպքում ծնողները գրեթե չեն վերահսկում իրենց երեխաներին՝ թույլ տալով նրանց անել այն, ինչ ուզում են, այդ թվում՝ ուշադրություն չդարձնելով իմպուլսիվ վարքագծին: Արդյունքում այն դառնում է անկառավարելի, անգամ ագրեսիվ: Ավտորիտար ծնողները խիստ հսկողություն են սահմանում՝ կարծելով, որ երեխաներն ամեն ինչում պետք է ենթարկվեն իրենց կամքին: Որպես դաստիարակության մեթոդներ

³ Տես՝ Ա. Ա. Բայան, Դաստիարակության հոգեբանական հիմունքները, 1973, էջ 12

⁴ Տես՝ Чудиловская Ольга Ивановна, Семья и ребенок - зеркальное отражение друг друга, <http://ddu462.minsk.edu.by/ru/main.aspx?guid=1801> /հղվել է 24.08.22 /

օգտագործում են պատիժը, սպառնալիքները: Նման ձևով դաստիարակվող երեխաները դառնում են անհանգիստ, մռայլ, դյուրագրգիռ, կոնֆլիկտային:

Դաստիարակչական ֆունկցիայի հետ սերտորեն կապվում է մյուս էական՝ սոցիալականացման գործառույթը: Սոցիալականացման իմաստն ամփոփվում է սեփական «ես»-ի արտահայտման, հնարավորությունների, ստեղծագործական բնույթի բացահայտման, հասարակությանը հանգիստ կերպով ինտեգրվելու մեջ: Այն նորմերի ու արժեքների յուրացման գործընթաց է, որն անհրաժեշտ է ապագա հաջող գործունեության համար: Տվյալ հասկացությանն իմաստով մոտ է «ադապտացիա» տերմինը⁵: «Ադապտացիա» նշանակում է հարմարվողականություն: Հարմարվողականությունը կարելի է դիտարկել ն՝ որպես սոցիալականացման անբաժանելի մաս, ն՝ որպես մեխանիզմ: Սոցիալ-հոգեբանական ադապտացիան անհատի կողմից իր դերի յուրացումն է սոցիալական նոր իրավիճակ մտնելիս: Ըստ արդյունքների՝ լինում է դրական կամ բացասական, ըստ կատարման ձևի՝ կամավոր կամ հարկադիր: Որ տարբերակն ու ինչպես կդրսևորվի, կախված է ընտանիքի կողմից երեխային փոխանցված հմտություններից:


Ներկայացված երկու գործառույթներին հաջորդող ֆունկցիան ռեկրեացիոն և հոգեթերապևտիկ գործառույթն⁶ է: Սա նշանակում է, որ ընտանիքը պետք է լինի այն տեղը, որտեղ մարդը կարող է իրեն պաշտպանված զգալ, ընդունված՝ չնայած իր կարգավիճակին, արտաքին տեսքին, կյանքում ունեցած հաջողություններին կամ ֆինանսական վիճակին և այլն: Այսինքն՝ առողջ, ոչ կոնֆլիկտային ընտանիքն ամենից հուսալի հենարանն է, լավագույն ապաստանը, ուր կարելի է գնալ և գոնե ժամանակավորապես թաքնվել արտաքին աշխարհի վտանգներից, հանգստանալ ու վերականգնել ուժերը: Դիտարկումները ցույց են տալիս, որ մարդու էներգիան առավելագույն չափով վերականգնվում է ընտանեկան միջավայրում, սիրելիների

⁵ Стен` Семенов Ю. В., Особенности социализации в подростковом возрасте, <https://works.doklad.ru/view/EQxUxQvKaaA/all.html> /հղվել է 24.08.2022/

⁶ Стен` Основные функции семьи, https://studbooks.net/756087/pedagogika/osnovnye_funktsii_semi /հղվել է 24.08.22 /

ու երեխաների հետ շփման շնորհիվ: Ընտանիքի անդամները բարոյապես աջակցում են միմյանց, օգնում են հաղթահարել ոչ դյուրին պահերը:

Հարկ է նկատել, որ ընտանիքին վերագրվում են նաև վերարտադրողական գործառույթը, ինչի շնորհիվ ապահովվում է սերնդի շարունակականությունը և բնակչության աճը, ու տնտեսական գործառույթը: Վերջինն արտացոլում է հետևյալը՝ մեկ հարկի ներքո բնակվող մարդիկ համատեղ դեկավարում են, կազմակերպում կենցաղն ու գործերը, զբաղվում ընտանեկան բյուջեի բաշխմամբ:



Այսքանից հետո հասկանալի է դառնում, որ ընտանիքի կառուցվածքը, դրա ներկա վիճակը և ապագա զարգացման ուղղությունը պատկերացնելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ծնող-երեխա փոխհարաբերություններին, տանը տիրող մթնոլորտին: Տիրող մթնոլորտը գնահատելիս հաշվի է առնվում փոխըմբռնման, հարգանքի, օգնության և կարեկցանքի առկայությունը: Վերը նկարագրված ֆունկցիաների ճիշտ կազմակերպման, հավասարակշռության պահպանման պարագայում է, որ երեխայի անհատականությունը լիովին ձևավորվում է ու դրսևորվում:

ԳԼՈՒԽ 2

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ՎՐԱ

Ցանկացած ընտանիքում կարող են առաջանալ կոնֆլիկտներ և ճգնաժամեր, սակայն դրանց քանակն ու սրության աստիճանը տարբեր են: Հիմնականում կոնֆլիկտները շոշափվում են երկու մակարդակում՝ ծնողի և երեխայի կամ հայրիկի ու մայրիկի, որի դեպքում երեխան անմիջական մասնակից չէ, բայց ազդեցության անմիջական կրող է: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր դեպքն էլ կարող է բացասաբար ազդել երեխայի վրա, մասնավորապես՝ նրա ուսումնառության: Ինչպե՞ս:

Սկզբում վերցնենք օրինակ, վեր հանենք ծնողի ու երեխայի միջև առաջացող խնդրի պատճառներից մեկը: Այսպես՝ բալիկը ցանկանում է դուրս գալ և խաղալ ընկերների հետ, իսկ մայրը պետք է ստուգի նրա տնային առաջադրանքները, հարկ եղած դեպքում օգնի ու անցնի մնացյալ գործերին: Մայրը պարտադրում է, որ երեխան կատարի աշխատանքը, իսկ երեխան ցանկանում է թողնել այն հետոին: Ակնհայտ է, որ երկուսի շահերը բխվում են, և դա դառնում է կոնֆլիկտի զարգացման նախադրյալ:

Նման կոնֆլիկտների առաջացման ժամանակ հարկավոր է ուշադրություն դարձնել լուծման մեթոդներին: Հաճախ կիրառվող առաջին ոչ կառուցողական ճանապարհն անվանվում է «Հաղթում է միայն ծնողը»⁷: Ծնողները, որոնք հակված են օգտագործել այս մեթոդը, մտածում են՝ անհրաժեշտ է կոտրել երեխայի դիմադրությունը, հակառակ դեպքում նա կանի այն, ինչ ցանկանում է: Նրանք իրականում փոքրերին ցույց են տալիս վարքի կասկածելի մոդել ու անգիտակցաբար սովորեցնում՝ «Հասեք ձեր ուզածին՝ անկախ մյուսի ցանկություններից»: Այդ ամենը պրոյեկտվում է մյուս միջավայրերի վրա, այդ թվում՝

⁷ Տե՛ս՝ Артемьева Е.И., Конфликты родителей и детей: варианты разрешения, <http://www.xn--283-5cd3cgu2f.xn--p1ai/index.php/sluzhba-mediatsii/542-konflikty-roditelej-i-detej-varianty-razresheniya> /հղվել է 24.08.22 /

դպրոցի: Տվյալ մեթոդի մեկ այլ տարբերակն էլ կա. երեխային չեն ստիպում, փոխարենը նրբանկատորեն հասցնում են նրան, որ երեխան ինքնակամ կատարի իրենց ցանկությունը: Դա ուղեկցվում է բացատրություններով, որոնց հետ երեխան վերջիվերջո համաձայնվում է: Սակայն, եթե նման ճնշումը ծնողների մշտական մարտավարությունն է, բալիկը յուրացնում է մեկ այլ կանոն՝ «Իմ անձնական շահերը, ցանկությունները, կարիքները հաշվի չեն առնվում, պետք է անել այն, ինչ ծնողներս են ուզում կամ պահանջում»: Որոշ ընտանիքներում սա դիտվում է տարիներ շարունակ, իսկ երեխաներն անընդհատ պարտվում են: Սովորաբար այդպիսիք դառնում են կա՛մ ագրեսիվ, կա՛մ չափից դուրս պասիվ: Բայց երկու դեպքում էլ նրանք կուտակում են գայրույթ և դժգոհություն, նրանց հարաբերությունները ծնողների հետ չի կարելի համարել մտերմիկ:

Ծնողների և երեխաների միջև հակամարտությունը լուծելու երկրորդ դեստրուկտիվ մեթոդը «Միայն երեխան է հաղթում» տարբերակն է: Նման ճանապարհով գնում են ծնողները, որոնք կա՛մ վախենում են կոնֆլիկտներից, ձգտում են խաղաղության ամեն գնով, կա՛մ պատրաստ են անընդհատ զոհաբերել իրենց: Այդ պարագայում երեխաները մեծանում են եսասեր, սովոր չեն լինում կարգուկանոնին, չեն կարողանում ինքնակազմակերպվել: Միգուցե այս ամենն այնքան էլ նկատելի չլինի տան պատերի ներսում, բայց հենց որ տան դռնից դուրս են գալիս երեխաները և միանում ինչ-որ ընդհանուր գործի, հայտնվում են դպրոցում, սկսվում են դժվարությունները:

Հարկ է շեշտել, որ կոնֆլիկտներ շատ են նկատվում երեխայի անցումային տարիքում, նույն ինքը՝ դեռահասության շրջանում: Ինչու՞ հենց այդ շրջանում: Մանկության և պատանեկության միջև ընկած ժամանակաշրջանում խորքային փոփոխություններ են կատարվում դեռահասի հոգեկանում. մանկական անմիջականությունը, վստահելիությունը, պարզությունը փոխակերպվում են ծայրահեղ քննադատ, մեկուսացվածությանը հակված դրսևորումներով, սեփական անձի և շրջապատի նկատմամբ մեծ պահանջկոտությամբ: Դեռահասը դյուրագրգիռ է դառնում, վիրավորվող, նեղացկոտ, չափազանց զգայուն: Ամբողջ այդ ընթացքում ծնողական թյուր ընկալումն է հաճախ երեխաների և ծնողների միջև ծագող

կոնֆլիկտի պատճառ դառնում⁸: Դեռահասները մշտապես պայքարում են ազատության համար, որպեսզի իրենց համարեն մեծ ու խորը զայրանում են, երբ իրենց վերաբերվում են ինչպես փոքրի: Երեխան մեծ չէ, բայց արդեն երեխա էլ չէ: Դեռահասը կարող է դառնալ կոպիտ, քննադատել ծնողներին և մյուս մեծերին: Նա վրդովում է, եթե իրեն ճնշում են, մտնում իր անձնական տարածք: Այս տարիքում ծնողները հեշտությամբ կորցնում են կապը նրանց հետ, և բնականաբար առաջանում են խնդիրներ: Ծնողների մեծ մասը փորձում է գերխնամք դրսևորել: Նրանք ձգտում են պահպանել էմոցիոնալ մտերմություն երեխայի հետ, կարծես «արջի ծառայություն մատուցեն»: Հոգում են, որպեսզի դեռահասն ընտանեկան դժվարությունների առաջ չկանգնի, չհոգնի ամենօրյա դժվարություններից, անհոգ լինի, ոչնչի կարիք չզգա: Եվ հետագայում փաստի առաջ են կանգնում, քանի որ հենց նույն դեռահասները պատրաստ չեն լինում կյանքի դժվարություններին, մշտապես սպասում են օգնության հարազատների կողմից, ինքնուրույն չեն:

Այս ամենից հետևություն ենք անում, որ ծնողի ու երեխայի միջև առաջացող կոնֆլիկտների պատճառները բազմազան են՝ սկսած թյուրըմբռնումից մինչև տարիքային առանձնահատկություններ: Այժմ անցնենք խնդիրներին, որոնք ծագում են ծնողների միջև և ևս մեծ ազդեցություն ունենում երեխայի հոգեբանության ու կրթության որակի վրա:

Ցավոք սրտի, ընտանեկան վեճերի թեժ բույներին ծնողները չեն մտածում, թե ինչ է զգում երեխան: Իրադրությունը, երբ երկու ամենամոտ մարդիկ վիճում են, հսկայական ճնշում է գործադրում բալիկի փխրուն հոգեկանի վրա՝ զգալի հետք թողնելով այն ամենի վրա, ինչ անում է երեխան հիմա և ինչ է ուզում: Հետազոտությունները⁹ ցույց են տվել, որ ծնողների վեճերի հետևանքով երեխաների 28%-ն ունենում է հոգեւոմատիկ հիվանդություններ, 19%-ը ցուցաբերում է անհնազանդ վարքագիծ, 41%-ը նվազեցնում է առաջադիմությունը: Առավել քան

⁸ Տես՝ Տաթև Նահապետյանի ֆեյսբուքյան հրապարակում, Դեռահասության շրջանում ծագող կոնֆլիկտները ծնողների հետ <https://www.facebook.com/104849104194614/photos/a.239825140697009/747650236581161/> /հղվել է 24.08.22 /

⁹ Տես՝ Влияние конфликтов в семье на ребенка https://drive.google.com/file/d/17-vcx8Bsf-pWHjv_lMam05ldSmmzH6Li/view?usp=sharing /հղվել է 24.08.22 /

հասկանալի է, թե ինչու է այդպես պատահում: Եթե ծնողներն անընդհատ վիճում են, երեխայի հոգում (հետևաբար նաև մարմնում) սկիզբ է դրվում «ինքնառնչացման» ծրագրի: Ամենից առաջ հիվանդանում են նախադպրոցական տարիքի երեխաները: Նրանք ուզում են ստանալ ծնողների ուշադրությունը և «մարել» նրանց վիճաբանությունը: Երբ նման մեթոդը դառնում է ընտանիքում համերաշխություն բերելու «հաջող» ձև, ապա շարունակվում է հետագայում, «օգտագործվում» ավելի ուշ՝ կրտսեր դպրոցական տարիքում:

Երեխաները, որոնք հաճախ են ականատես եղել ընտանիքում գրանցված վեճերին, ունենում են ներանձնային կոնֆլիկտ և ցածր ինքնագնահատական, ցանկացած սթրեսային իրավիճակում կարող են անինքնավստահություն ցուցաբերել, նրանց մոտ երբեմն զարգանում են ապատիա, դեպրեսիա¹⁰: Երեխայի մոտ ձևավորվում է աշխարհի մասին բացասական պատկերացում, և դա էապես վատթարացնում է նրա կյանքի որակը: Կոնֆլիկտային ընտանիքի բալիկը զարգացնում է բնավորության հատուկ գծեր, որոնք խանգարում են նրա սոցիալականացմանը: Օրինակ՝ մեկուսացում, ագրեսիվություն, դաժանություն ուրիշների նկատմամբ, կատարյալ անտարբերություն: Ավելի քիչ հավանական է, որ նման երեխաները դպրոց գնան սովորելու պատրաստակամությամբ¹¹: Կարող է խանգարվել նրանց քունը՝ ազդելով ուշադրության և կենտրոնացման վրա: Ծնողների միջև թշնամական տրամադրությանը ենթարկվելը հանգեցնում է զգացմունքային և վարքային խնդիրների, որոնք դրսևորվում են դասարանում, հասակակիցների հետ շփման ընթացքում: Պատկերացրե՛ք՝ դասարանի ավագն է այդպիսի ընտանիքից, խնդիրը կրկնակի է բարդանում: Առաջնորդը ցանկացած խմբի կենտրոնն է, ուստի եթե առաջնորդը գտնվում է ընտանեկան կոնֆլիկտների բացասական ազդեցության ներքո, դա արտացոլվում է ամբողջ խմբի մեջ: Խմբի պրոդուկտիվությունը չի աճում, խմբային համախմբվածություն չի լինում:

¹⁰ Տես՝ Семейные конфликты и дети, <https://cherikovcrb.by/informatsiya/stranitsa-psikhologa/1191-semejnye-konflikty-i-deti> /հղվել է 24.08.22 /

¹¹ Տես՝ Early Intervention Foundation, Why reducing the impact of parental conflict matters for schools, <https://drive.google.com/file/d/1LdrAH2wDP2-zVNJvaOjhmCBRAV5UjHOEP/view?usp=sharing> /հղվել է 24.08.22 /

Այս իսկ պատճառներով ընտանիքի և հասարակության համար կարևոր խնդիր է ընտանեկան կոնֆլիկտների կարգավորումն ու կանխարգելումը, որոնք բերում են բացասական հետևանքների անհատի, ընտանիքի ու ողջ հասարակության համար:

ԳԼՈՒԽ 3

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄՆ ԱՇՄԿԵՐՏԻ ՀԵՏ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Մանկավարժի ու երեխայի մեջ գոյություն ունեցող շփման տիպը և ուսուցչի՝ աշակերտի հոգեբանական առանձնահատկությունների մասին ունեցած տեղեկատվությունը բավականին մեծ կարևորություն ունեն կոնֆլիկտների բացահայտման հարցում: Ընդհանրապես, երեխաներն ուսուցչին կարող են տեսնել տարբեր դերերում¹²: Այդ տեսակներն են.

. Հաղորդավարի դեր – Մանկավարժը սահմանափակվում է երեխային հաղորդելով պահանջներ, հայացքներ և այլն, որոնք պետք է նա յուրացնի: Օրինակ՝ լինել ազնիվ, կարգապահ:

. Բարեկամի դեր – Ուսուցիչն իր ներգործությունների հիմքում դնում է բարեկամական ներթափանցումը երեխայի հոգու մեջ:

. Բռնապետի դեր – Դաստիարակության ուղին մանկավարժը տեսնում է որոշակի արժեքների, հայացքների բռնի արմատավորման մեջ:

. Խորհրդատուի դեր – Մանկավարժը գլխավորապես զբաղվում է դաստիարակվողներին խորհուրդ տալով, համոզելով:

. Խնդրողի դեր – Մանկավարժն, ըստ ամենայնի, թախանձում, երեխայի համաձայնությունն է խնդրում լինել այնպես, ինչպես պետք է լինել:

. Ոգեշնչողի դեր – Մասնագետը հիմնականում փորձում է իր զգացմունքներով, ապրումներով, ձգտումներով խանդավառել սաներին:

¹² Տես՝ Ա. Ա. Բայան, Դաստիարակության հոգեբանական հիմունքները, 1973, էջ 40-41

. Ուղղություն տվող դեր – Մանկավարժը գլխավորապես աշխատում է իր սաներին հրապուրել հաճելի, հետաքրքրական նպատակներով, հեռանկարներով, գործունեության նպատակներով:

Թվարկված տարբերակներից յուրաքանչյուրը կարող է տալ դրական կամ բացասական մանկավարժական արդյունք: Կոնկրետ իրավիճակում կոնկրետ դեր ընտրելիս հարկ է հիշել հետևյալը. երեխայի բոլոր քմահաճույքների անառարկելի կատարումը երբեմն հանգեցնում է եսամոլության, շփացման: Անարդարացիությունը և դաժանությունը ծնում են վախկոտություն, երկչոտություն, գաղտնի կամ բացահայտ ըմբոստություն, թշնամանք շրջապատի մարդկանց նկատմամբ: Արհամարհանքն ու բարձիթողի վիճակը դաստիարակում են արտաքին և ներքին անզսպվածություն, ներքին արգելիչների բացակայություն:

Առհասարակ, ուսուցիչն, ուշադրություն դարձնելով աշակերտի վարքագծի հանկարծակի փոփոխություններին, կարող է ժամանակին գլխի ընկնել՝ երեխան գտնվում է ճգնաժամային վիճակում: Ուսուցչի հետաքրքրությունն ու աջակցելու պատրաստակամությունը կարող են հենարան դառնալ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված աշակերտի համար, ապահովել աջակցություն, հարմարավետություն, անվտանգություն և թեթևացում¹³: Երեխայի դժգոհ պահվածքը, զայրույթը, կանոններին հետևել չցանկանալը կարող են լինել հենց կյանքի դժվարին իրավիճակի հետևանք: Աշակերտների ագրեսիային, ըմբոստությանը հանդիպելիս ուսուցչի համար կարևոր է հիշել, որ նման վարքագիծը միգուցե պաշտպանական բնույթ ունի և որևէ կապ չունի ուսուցչի անձի հետ: Երեխան ընդամենը ձգտում է նվազեցնել լարվածությունը, հաղթահարել անհանգստության բարձր մակարդակը:

Երբ ուսուցիչը բացահայտել է, որ երեխան կոնֆլիկային վիճակ է վերապրել, պետք է սկզբում զրուցի նրա հետ: Սկսելով զրույց աշակերտի հետ՝ կարևոր է հետևել նրա հուզական վիճակին: Առաջին հերթին պետք է համոզել երեխային, որ

¹³ Տե՛ս՝ Республиканский центр психологической помощи, Ребенок в кризисном состоянии. Как вести себя учителю?, Минск http://rcpp.by/article/rebenok_v_krizisnom_sostoyanii/ /հղվել է 24.08.22 /

նա մենակ չէ: Խոսելով իրենց խնդիրների մասին՝ աշակերտները հաճախ հնչեցնում են կատեգորիկ, արհամարհական և նույնիսկ վախեցնող արտահայտություններ: Ուսուցիչը պետք է պահպանի իր սառնասրտությունը և արձագանքի այնպես, որ քննարկումը շարունակվի:

Օրինակ 1՝

Աշակերտ - Ես սարսափելի բան եմ արել: Ինձ չեն ների:

Ուսուցիչ - Արի փորձենք քննարկել տեղի ունեցածը և միասին մտածենք, թե ինչ կարելի է անել:

Չի կարելի պատասխանել այս ձևով՝ «Ինչի՞ մասին էիր մտածում, երբ դա արեցիր: Մա էլ արդյունքը, ստացիր» կամ «Իհարկե, ես էլ նման բանը չէի ների»:

Օրինակ 2՝

Երեխա - Ոչ ոք ինձ չի հասկանում:

Ուսուցիչ - Ասա ինձ այն մասին, թե ինչ պետք է հասկանամ: Ես իսկապես ուզում եմ ճիշտ ձևով ընկալել միտքդ:

Պետք չէ արձագանքել այսպերպ՝ «Իսկ ո՞վ է ձեզ ընդհանրապես հասկանում, ախ այս ժամանակակից երեխաները»:

Անհրաժեշտ է կենտրոնանալ աշակերտի ասածի վրա, նրան խոսելու հնարավորություն տալ, չընդհատել, ուշադիր հետևել երեխայի պատմությանը, գուգահեռաբար որևէ նշում չկատարել: Երբեմն երեխային բավական է միայն այն, որ որևէ մեկն ուշադրություն դարձնի իր խնդրին ու հետաքրքրվի իրենով:

Օրինակ 3՝

Երեխա - Ես ինձ շատ վատ եմ զգում, կարծում եմ, որ ոչ մի բանի ընդունակ չեմ:

Ուսուցիչ - Ժամանակ առ ժամանակ յուրաքանչյուր մարդ իրեն ճնշված և դատարկ է զգում, թվում է, որ դա երբեք չի ավարտվի: Արի խոսենք այն մասին, թե ինչն է քեզ հիմա անհանգստացնում:

Պետք չէ ասել՝ «Չի կարելի այդպես ասել: Մնունդ ունես, ընտանիք, տուն, ծածկ, մտածիր նրանց մասին, որոնք հիմա էլ ավելի վատ են» կամ «Արդեն դադարիր նվնվալ և գործի անցիր: Եթե այդպես նստես, չի ստացվի»:

Ցանկալի է հրաժարվել խորհուրդներից: Այդ պահին ուսուցչի խնդիրն է երեխային հնարավորություն տալ բացվելու և բարձրաձայնելու, կիսվելու իրեն տանջող մտքերով: Դա անելու համար անհրաժեշտ է խուսափել քննադատությունից ու նախատինքի խոսքերից:

Օրինակ 4՝

Երեխա - Ես աստում եմ սովորելը: Որքա՛ն եմ հոգնել այս ուսուցիչներից և ծնողներից:

Ուսուցիչ - Ի՞նչ ես սովորաբար անում, երբ դա զգում ես: Ունե՞ս մոտ մարդ, ում հետ կարող ես քննարկել դա: Ի՞նչ է կատարվում քեզ հետ ներկա պահին:

Պետք չէ ասել՝ «Ինչպե՞ս կարող ես այդպես ասել: Ուսուցիչներն ու ծնողները միայն լավն են ցանկանում ձեզ համար» կամ «Ուրախ եղեք, որ սովորելու հնարավորություն ունեք»:

Կարևոր է հասկանալ, որ մեկ զրույցը բավարար չէ ճգնաժամի մեջ գտնվող երեխային օգնելու համար: Զրույցից հետո ուսուցիչը պետք է ապահովի, որ աշակերտը մենակ չմնա իր խնդրի հետ: Ճգնաժամից վերականգնվելը երկար և խրթին գործընթաց է, և շրջապատի մեծահասակների գործն է մնալ կարեկից ու հետևել գործընթացին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով «Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ» թեման՝ կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները՝

1. Ընտանիքը գցում է երեխայի դաստիարակության հիմքերը, իսկ կրթական հաստատությունները զարգացնում են ներդրվածը:

2. Ընտանիքում հոգևոր հավասարակշռության խախտումը, սխալ մոտեցումների ընտրությունը ոչ բարենպաստ ազդեցություն է ունենում երեխայի անհատականության զարգացման վրա, ծնողների հետ հարաբերությունները ստացվում են տրավմատիկ և իրենց հետքն են թողնում երեխայի ինչպես հոգեկան, այնպես էլ ֆիզիկական առողջության, կրթության որակի վրա: Երեխաների վրա տվյալ ազդեցությունը հաճախ դրսևորվում է ոչ թե բացահայտ, ուղղակի ձևով, այլ անուղղակի:

3. Ուշադիր ու տեղեկացված լինելու դեպքում մանկավարժը կարող է կանգնեցնել խնդրի բարդացումն ու աջակցման ուղիներ գտնել երեխայի համար: Նրա գործունեության բանալին հասարակական հաղորդակցության կուլտուրային տիրապետելն է:

Մենք առաջարկում ենք երեխաների հետ շփման ընթացքում հաճախ կիրառել «Ակտիվ ունկնդրում» հնարքը: Ակտիվ լսելն օգնում է կապ հաստատել և գրավել զրուցակցին, հասկանալ նրա տեսակետը ու, անհրաժեշտության դեպքում այն ճիշտ ուղղությամբ շրջել: Ակտիվ ունկնդրման ժամանակ թեքվում ենք դեպի զրուցակիցը, գլխով համաձայնության շարժում անում, աչքերով պահում կապը, արձագանք տալիս, խոսքը մանրամասնման տանում՝ որտեղ, երբ, ինչպես: Եվ, իհարկե, սրանից զատ լրացնում ենք «վստահության բանկը»: Սկզբունքը պարզ է՝ եթե երեխային ինչ-որ կերպ օգնեցիք կամ ուրախացրիք, «վստահության բանկը» հոգուտ ձեզ կհամալրվի, իսկ եթե նախատեք ամեն չնչին բանի համար, նրա վստահությունը ձեր հանդեպ կնվազի: Կարևոր է հիշել, որ վստահության «միավորներն» ավելի արագ հեռանում են, քան կուտակվում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Ա. Բալլան, Դաստիարակության հոգեբանական հիմունքները, 1973
2. Семенов Ю. В., Особенности социализации в подростковом возрасте, Стерлитамак, 2003
3. Чудиловская Ольга Ивановна, Семья и ребенок - зеркальное отражение друг друга
4. Артемьева Е.И., Конфликты родителей и детей: варианты разрешения
5. Республиканский центр психологической помощи, Ребенок в кризисном состоянии. Как вести себя учителю?, Минск
6. Оксана Германовна, Основы психологии семьи и семейного консультирования, Москва, 2005
7. Early Intervention Foundation, Why reducing the impact of parental conflict matters for schools